

ՁՈՐԾ ՁԱՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԷՆ ՀՈԳԻՒ ՀԱՄԱՐ

ՅՈՎՍԵՓԻՆ

Երեկ գիշեր՝
աչքերս փակ, անհուն ու արթուն
երագեցի
մանկութիւնս, գիւղս, հայրս ու մայրս,
բարեկամներս, եղբայրս սիրելի.
նամբաները գիւղիս, պարտեզներն
անուշահոտ,
ու ձին ու կառքը՝ կառապան դրացիիս,
ու կապոյտ ծովը, արեւը տաք,
գիշերը գաղջ, ցօղն առտուան:
Պատառ պատառ եղաւ սիրտս ծանր ցաւերով
յիշատակներու բուրգերով
մեղեդիով
ու վիշտով.
մէկիկ մէկիկ եկան անցան աչքերէս
անոնք որ արդէն չկան ալ գիւղը,
բայց կային հոն՝ երբ ես
մէկ մասն էի գիւղին.
կորսուած օրեր:

* * *

Ես կը զգամ որ արիւնիս մէջ՝
խորը իմ հոգիիս մէջ՝
որ ամէնքը
ամէնքը որ կ'ապրին ծառերուն վրայ բաց
ու տուններուն մէջ փակ,
եղբայրներս են:
Ասիկա՝ բոլոր ուժերէս, մտածումներէս,
կիրքերէս, ատելութենէս, վախերէս
ալ մեծ է:
Տարիներ փնտռեցի սկիզբն ու վերջն այս
մեծութեան.
նչ սկիզբ գտայ, ոչ վերջ:

* * *

Ես այն մարդերէն եմ՝ որ
ամէն օր բարեկամ կը փնտռէ.
հաւատացէ՛ք
լաւ բան է ունենալ սիրտ մը,
ուր ամէնուն համար անկիւն մը կայ.
բայց եթէ նոյնիսկ այսպէս չըլլար,
պիտի ըլլայ մէկը որ դարձեալ
գիշեր, ցերեկ
ամէն օր, բարեկամ կը փնտռէր.
Եւ հաւատացէ՛ք
լաւ բան է
բարեկամ մը ունենալ՝
գէթ
մէկ հատ:

* * *

Եթէ անգամ մը որոշես
թէ անիրենքը պէտք է որ դառնան
ու ծեր մարդը քէ կառքը,
ամէն ինչ այլեւս
շիտակ պիտի ընթանայ:
Ո՞վ է այս ծեր մարդը:
Ես հարիւր անգամ մտածեցի թէ
ի՞նչ է ըսածս,
ու հարիւր անգամ
ուրիշ պատմութիւններ եկան
աչքերուս:
Բայց ո՞վ է այս ծեր մարդը:

Յունուար, 1967

ԱՌԱՆ ԳԱՍՊԱՐԵԱՆ